Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհուրդը հասարակական հիմունքներով գործող խորհրդակցական մարմին է, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 11.11.2013թ. թիվ 39-Լ որոշմամբ:

Երիտասարդական խորհուրդը կազմված է նախագահից և վեց անդամից: Երիտասարդական խորհրդի նախագահին և անդամներին նշանակում է Պալատի նախագահը: Երիտասարդական խորհրդի նախագահ կարող է նշանակվել ցանկացած փաստաբան, որի արտոնագիրը կասեցված չէ, իսկ խորհրդի անդամ կարող է նշանակվել ցանկացած փաստաբան, ով համապատասխանում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կանոնագրքով սահմանված պահանջներին:

Երիտասարդական խորհրդի նպատակն է՝

ա) աջակցել վերջին երեք տարում փաստաբանական գործունեության արտոնագիր ստացած և հետագայում նոր արտոնագրեր ստացող փաստաբանների (այսուհետ՝ Երիտասարդ փաստաբաններ)' մասնագիտական ոլորտում ինտեգրման գործընթացին,

բ) վեր հանել Երիտասարդ փաստաբանների մասնագիտական գործունեության ընթացքում առաջացած խնդիրները, ներկայացնել Պալատին և աջակցել դրանց լուծմանը,

գ) նպաստել Երիտասարդ փաստաբանների և փաստաբանների համագործակցությանը, Երիտասարդ փաստաբանների և փաստաբանների ոչ մասնագիտական շփումներին (կազմակերպել ոչ պաշտոնական հանդիպումներ, տարաբնույթ մշակութային և ժամանցային միջոցառումներ),

դ) կապեր հաստատել այլ երկրներում գործող նմանատիպ կառույցների հետ:

Երիտասարդական խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Նիստերը հրավիրում և նախագահում է Երիտասարդական խորհրդի նախագահը' իր կողմից հաստատված օրակարգով: Նիստերը կարող են հրավիրվել նաև Երիտասարդական խորհրդի անդամների կամ Պալատի նախագահի տեղակալի նախաձեռնությամբ՝ նրանց կողմից առաջարկվող օրակարգով:

Երիտասարդական խորհրդի որոշումները կայացվում են քվեարկությանը մասնակցած անձանց ձայների պարզ մեծամասնությամբ' բաց քվեարկությամբ: Ձայների հավասարության դեպքում Երիտասարդական խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

Երիտասարդական խորհրդի որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:

Երիտասարդական խորհուրդը գործում է «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կանոնակարգի» հիման վրա, որը հաստատվել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 11.11.2013թ. թիվ 39-Լ որոշմամբ (նոր խմբագրությամբ շարադրվել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 28.07.2021թ-ի թիվ 133-Լ որոշմամբ):

Երիտասարդական խորհրդի անդամներն են հետևյալ փաստաբանները.

Միքայել Դանիելյան **Երիտասարդական խորհրդի նախագահ**	*Նազիկ Մալխասյան* **Երիտասարդական խորհրդի անդամ**	*Միքայել Ահարոնյան* **Երիտասարդական խորհրդի անդամ**	*Հասմիկ Թադևոսյան* **Երիտասարդական խորհրդի անդամ**	*Աբգար Պողոսյան* **Երիտասարդական խորհրդի անդամ**	*Վարդուհի Սարգսյան* **Երիտասարդական խորհրդի անդամ**	*Ստելլա Սայադխանյան* **Երիտասարդական խորհրդի անդամ**

Բեռնել ՀՀ ՓՊ նախագահի«Երիտասարդական խորհրդի նախագահ եվ անդամներ նշանակելու մասին»07.09.2021 թիվ 215-Ա որոշումը

Բեռնել երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագիրը

Բեռնել աշխատասենյակից օգտվելու ընթացակարգը

Բեռնել աշխատասենյակից օգտվելու համար հայտեր ընդունելու մասին որոշումը